ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածի 6-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Սահմանել Կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի հոկտեմբերի 6-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային 1-ին և 1. 1-ին հարցերի քննարկման հետևյալ ընթացակարգը.

1) երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրանց ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) նախագծերի վերաբերյալ գրավոր առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սահմանել Կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի հոկտեմբերի 6-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային 2-րդ հարցի քննարկման հետևյալ ընթացակարգը.

1) վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը ներկայացնում է հիմնական զեկույցը մինչև 15 րոպե տևողությամբ.

2) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողի համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը.

ա. հարցերի համար՝ երկուական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

3) մինչև վեց րոպե տևողությամբ հարակից զեկույց է ունենում գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար.

4) հայտ ներկայացնելու դեպքում մինչև 6 րոպե տևողությամբ ելույթներ են ունենում խմբակցությունների մեկական ներկայացուցիչներ.

5) մտքերի փոխանակության ելույթների համար նախատեսվում է վեցական րոպե ժամանա.

6) մտքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով.

7) մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 7 ժամ.

8) նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկների

և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար նախատեսվում է երեքական ժամ.

9) պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվում է սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում.

10) հիմնական զեկուցողին նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնելու համար տրամադրվում է մինչև 15 րոպե ժամանակ.

11) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողի համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը.

ա. հարցերի համար՝ երկուական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

12) հայտ ներկայացնելու դեպքում մինչև վեցական րոպե տևողությամբ մեկական ելույթ են ունենում՝

ա. նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները,

բ. խմբակցությունների մեկական ներկայացուցիչները,

գ. գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը,

դ. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները.

13) եզրափակիչ ելույթների համար նախատեսվում է մինչև 10 րոպե ժամանակ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, հոկտեմբերի 6
Երևան

ԱԺՈ- 449- Լ